«ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ

Անձին որևէ մասնագիտական գործունեության պատրաստման համար անհրաժեշտ է ոչ միայն մասնագետին անհրաժեշտ բազային և կիրառական գիտելիքների յուրացում, այլ նաև նրա մասնագիտական կարևոր հատկանիշների զարգացում: Այս իրավիճակի մշակման համար ելնում ենք նրանից, որ ուսուցչի մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ որակների զարգացմանն են միտված հոգեբանամանկավարժական ողջ առարկայաշարը, ինչպես նաև հատուկ դասընթացներ:

Անձնական որակի զարգացման հնարավորությունները ներկայացված են Վ. Ի Անդրեևի, Ա. Վ. Բատարշևի, Լ. Պ. Բուևայի, Զ. Ս. Գոնչարովայի, Վ. Վ. Դավիդովի, Ն. Դ. Լևիդովի, Ա. Ն. Լեոնտրայի, Յա. Ա. Պոնոմարևի, Բ. Մ. Տեպլովի, Վ. Դ. Շադրիկովի և այլոց աշխատություններում:

Մինչ անցում կատարելը ձեռնարկատիրական որակների զարգացման տեխնոլոգիայի նկարագրությանը նշենք, որ տվյալ հիմնախնդիրը հետազոտողները ներմուծում են «ձեռնարկատիրության հատկանիշ» հասկացություն:

Վ. Դ. Շադրիկովը նշում է, որ ցանկացած գործունեության վերաբերյալ կարելի է առանձնացնել մասնագիտական կարևոր հատկանիշների մի ամբողջ շարք, որոնց զարգացման մակարդակը մասնագիտության յուրացման սկզբնական շրջանում բավարար է թվում գործունեության իրականացման և սահմանված արդյունքների ապահովման համար: Մասնագիտական կարևոր հատկանիշների տակ հեղինակը նկատի ունի անձի հոգեբանաֆիզիոլոգիական հատկանիշները, այդ թվում՝ անձնական և համընդհանուր ընդունակությունները: Բացի այդ՝ Վ. Դ. Շադրիկովը բացահայտում է հոգեբանական տեսանկյունից ավելի տարածված կարծիք, համաձայն որի՝ ընդունակությունը ըմբռնվում է որպես ողջ կյանքի ընթացքում ձևավորված արդյունք: Այս գործընթացում որոշիչ դերը պատկանում է կրթությանը, որն էլ իր մեջ ներառում է զարգացում:

Ընդհանրապես, ժամանակակից գիտության մեջ ընդունակություններ սահմանող հատկանիշները, Վ. Ի. Կոպալովի պնդմամբ, կարելի է խմբավորել ըստ մի քանի խմբերի: Մոտեցումներից առաջին խմբում ընդունակությունը դիտարկվում է որպես անձի սոցիալական հատկանիշ, նրա «ժամանակակից կարողությունը»: Այս մոտեցումը ընդունակությանը կապում է անձի էական ուժերի հետ և ուշադրությունը սևեռում է մարդու ընդհանուր հատկանիշների վրա:

Վ. Ի. Կոպալովը կողմնակից է ընդունակությունների որոշման երրորդ խմբին և դիտարկում է դրանք որպես ինտեգրացված անհատական ընդունակություններ, որոնք հանդիսանում են մարդու ուժերի էության անհատական արտահայտություն և հիմնավորված են գործունեությամբ ու հասարակական հարաբերություններով: Այս խումբն իր մեջ միավորում է նախորդ երկու մոտեցումները:

Մեզ համար կարևոր է Բ. Ի. Տեպլովի հիմնավորումն այն մասին, որ ընդունակությունները դրսևորվում են կոնկրետ գործունեության պայմաններում՝ գիտելիքների, հմտությունների և նորամուծությունների ձեռք բերման և ձևավորման ժամանակ: Ընդունակությունից է կախված կատարվող գործունեության որակը, նրա հաջողությունը և գործունեության նպատակին հասնելու մակարդակը:

Ձեռնարկատիրական գործունեության մեջ առանձնացնում են մասնագիտական կարևոր այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ապագան կանխատեսելու, նոր մտքերի վերարտադրման ընդունակությունը, կողմնորոշումը տարբեր իրավիճակներում, նոր լուծումների փնտրումը, ինքնահաստատման կարողությունը, ինքնազարգացման հակվածությունը, գործունեության բազմակողմանիությունը, շփման հնարավորությունը, կազմակերպչական ձիրքը և այլն: Բացի ընդունակություններից՝ անհատի մասնագիտական գործունեության արդյունավետության վրա իրենց ազդեցությունն են թողնում մարդու խառնվածքը, ինչպես նաև անձնական բնութագրական այնպիսի գծեր, ինչպիսիք են աշխատասիրությունը, համառությունը, նպատակասլացությունը և այլն:

«Ձեռնարկատիրական գործունեության հիմունքներ» ծրագրի մշակման, ձեռնարկատիրական որակների զարգացման խնդիրների լուծման համար պահանջվում է՝

• հայտնաբերել ձեռնարկատիրոջ հատկանիշներ, որոնք առաջնային են նրա մասնագիտական գործունեության համար.

• ընտրել այնպիսի դիդակտիկ միջոցներ, որոնք կհամապատասխանեն դրված արդյունքներին, և դրանց օգնությամբ կառուցել «Ձեռնարկատիրական գործունեության հիմունքներ» ծրագրի ուսուցման գործընթացը, կատարել մոնիտորինգ:

Կանգ առնենք ձեռնարկատիրական հատկանիշների զարգացման խնդիրների լուծման յուրաքանչյուր փուլի վրա:

Ձեռնարկատիրոջ գործունեության համար առաջնային համարվող հատկանիշների բացահայտման համար անդրադառնանք այդ շրջանում կատարված հետազոտություններին: Անձի ձեռնարկատիրական հատկանիշների զարգացման հիմնախնդիրները արտացոլված են արտասահմանյան մի շարք

գիտնականների գործերում (Ի. Շումպետեր, Պ. Խիզրիչ, Ֆ. Հայեկ և ուրիշներ): Հայաստանում այն արդիական է դառնում շուկայական հարաբերությունների զարգացման հետ միաժամանակ: Սակայն անձի առանձին հատկանիշները, որոնք վերաբերում են ձեռնարկատիրությանը, հետազոտվել են տարբեր գիտնականների՝ սոցիոլոգների, մանկավարժների, հոգեբանների աշխատություններում: 1970-ական թվականներից սկսած հրապարակ են գալիս հասարակության կողմից անձին ներկայացվող պահանջների (Լ. Պ. Բուևա, Դ. Դ. Ռյաբով), պատասխանատվության դերի (Կ. Կ. Պլատոնով, Լ. Ս. Սլավինա, Վ. Ա. Յադով և ուրիշներ), ինքնուրույն և ստեղծագործական մոտեցումների (Վ. Ի. Անդրեև, Յա. Ա. Պոնոմարև, Վ. Պ. Տրուցով) վերաբերյալ աշխատություններ:

Ձեռնարկատիրական հատկանիշների վերաբերյալ ժամանակակից պատկերացումները միանշանակ չեն: Ձեռնարկատիրոջն անհրաժեշտ որակները հետազոտողների կողմից տարբեր կերպ են ներկայացված: Սույն խնդրին նվիրված աշխատանքների մեծ մասում ձեռնարկատիրական հատկանիշը դիտարկվում է որպես անհատի ընդհանուր, ամբողջական հատկանիշ: Տվյալ հասկացության վերլուծությունները ցույց են տվել, որ այն բավականին լայն է: Ե. Վ. Գլուշենկոն ձեռներեցության տակ հասկանում է ձեռնարկատիրոջ այնպիսի մի բարդ հատկանիշ, որը ներառում է նախաձեռնողականություն, ճկունություն, ինքնուրույնություն, ռիսկի գնալու պատրաստակամություն, և դրանք դիտարկում է որպես հատկանիշների մի համախումբ, որ պետք է ունենա ձեռներեցը:

Ն. Վ. Չիգիրինսկայան ձեռնարկատիրության համակարգի մեջ ներառում է անհատի մասնագիտական ընդհանուր հատկանիշները (ինքնուրույնություն, պատասխանատվություն), ինչպես նաև ձեռնարկատիրոջ խիստ մասնագիտական հատկանիշները (կանխատեսելիություն, իրավիճակի հստակ գնահատում): Համաձայն մեկ այլ մոտեցման՝ ձեռնարկատիրական հատկանիշը ներառվում է անձի գործարար հատկանիշների կազմում: Այսպես՝ Լ. Մ. Ֆուկսոնը գործարար հատկանիշների տակ հասկանում է անձի կազմակերպչական, ստեղծագործական և կառավարչական հատկանիշների ամբողջությունը:

Անձի գործարար որակների և ձեռներեցության զարգացման բնագավառում կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ գործնականորեն բոլոր հետազոտողները ձեռնարկատիրության գլխավոր հատկանիշների մեջ առանձնացնում են գործունեության նկատմամբ ստեղծագործական մոտեցումների ցուցաբերումը, պատասխանատվությունը, ինքնուրույնությունը, կանխատեսելու, նախաձեռնելու ունակությունը, ռիսկի գնալու պատրաստակամությունը, մարդկանց հետ շփվելու կարողությունը, աշխատասիրությունը, հաստատակամությունը, վճռականությունը: Հաճախ առանձնացվում են այնպիսի հատկա-

նիշներ, ինչպիսիք են դիտողականությունը, ճկունությունը, օպերատիվությունը: Այսպես՝ կանխատեսումն ու ճկունությունը, որպես կանոն, հանդիսանում են ստեղծագործական մոտեցումների տարրերից մեկը: Սովորաբար հեշտ են զուգակցվում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, աշխատունակությունը, համառությունը, պատասխանատվությունը և այլն:

Թվարկենք ձեռներեցին անհրաժեշտ, մեր կողմից առանձնացված որակական հատկանիշները.

• Կազմակերպչական կարողություն. դա անձի՝ իր գործը կազմակերպելու կարողությունն է, հմտությունը: Անձնավորության այդ հատկությունը փոխկապված է անձի ստեղծագործական, մտավոր, հոգեբանական, ֆիզիկական ակտիվ գործունեության հետ:

• Ստեղծագործելու կարողություն. վերջինս արտահայտում է նորը և օրիգինալը ստեղծելու մարդու կարողությունը:

• Աշխատունակություն. սա կամային հատկանիշ է, որի շնորհիվ մարդը ժամանակի ընթացքում կարող է կատարել այս կամ այն աշխատանքը:

• Հաղորդակցվելու ունակություն. վերջինս սոցիալական միջավայրին հարմարվելու, մարդկանց հետ շփվելու կարողությունն է:

• Նախաձեռնողականություն. կամային հատկանիշ է:

• Վճռականություն. անձնավորության այնպիսի հատկանիշ է, որի շնորհիվ նա կարող է ժամանակին ընդունել հիմնավորված և հաստատուն որոշումներ իր կյանքի և գործունեության տարբեր պայմաններում,

• Նպատակասլացություն. անընդհատ նորը որոնելու, գտնելու կարողությունն է, նպատակին հասնելու ձգտումը:

• Մրցունակություն:

• Ռիսկի գնալու կարողություն:

Վերը թվարկված հատկանիշների հետ մեկտեղ իրենց կարևոր նշանակությունն ունեն գործարար մարդասիրությունը, որոշումներ ընդունելու ինքնուրույնությունը և ինքնավստահությունը, իրավական և բարոյական նորմերի ընդունումը և պահպանումը, ընտանեկան հավատարմությունն ու կայուն վարքագծի պահպանումը, ազգի և միջավայրի ավանդույթների ընդունումը:

Մասնագիտական նշանակալից անձնական հատկանիշների հետ միասին կարևոր է նաև ապագա ձեռնարկատիրոջ կայացման դրդապատճառների ձևավորումը: Ձեռնարկատիրական գործունեությունը ամենից առաջ պետք է հաջողված լինի, քանի որ անհաջողությունը տանում է գործունեության սահմանափակման, այսինքն՝ հաջողությունն առաջին հերթին որոշվում է ստացված շահույթով: Այսպիսով՝ ձեռնարկատերը պետք է ուղղորդվի դեպի հաջողու-

թյունը. և այդ ուղղվածությունը կարելի է հասնել՝ ձևավորելով ուսանողների մոտ արդյունքին հասնելու շարժառիթներ:

Մանկավարժական բուհերում կրթական գործընթացի շրջանակներում մեր կողմից առանձնացված հատկանիշների ձևավորումը բավական բարդ է, սակայն մշակված տեխնոլոգիայի կիրառման փորձը վկայում է, որ դրանց զարգացումը մեծ կամ փոքր ծավալով հնարավոր է:

Ուսուցչի և ձեռնարկատիրոջ մասնագիտական նշանակալից հատկանիշների զարգացման տեխնոլոգիայի մշակման համար չպետք է նվազեցնել ուսումնական աշխատանքի ավանդական այնպիսի եղանակների և մեթոդների դերը, ինչպիսիք են դասախոսությունը (զարգացնում է աշխատունակությունը), արտալսարանային աշխատաժամանակը (նպաստում է անձի ստեղծագործական կարողությունների զարգացմանը):

Ուսանողների մոտ ձեռք բերման շարժառիթների ձևավորման ժամանակ մեզ համար կարևոր է սահմանել, թե ինչ միջոցներով կարելի է այն զարգացնել: Ե. Ե. Լուշնիկովան առանձնացնում է՝

1. լավատեսական համակարգի ստեղծումը.
2. բայրացակամությունը ուսուցչի գործելակերպում.
3. մասնակիցների համար ինքավստահության մթնոլորտի ստեղծումը (գնահատում, դժվար իրավիճակներում՝ սատարում).
4. նախագծված պատմությունների կիրառումը.
5. հասարակական կարծիքի հարկադրումը.
6. այնպիսի իրավիճակների ստեղծումը, որոնք ենթադրում են գործի հաջողություն, անհատական պատասխանատվություն.
7. ընտրության իրավիճակների ստեղծման ճանապարհի դրդումը.
8. հրամանը, պահանջը, սպառնալիքը, պատիժը:

Պրոբլեմային իրավիճակների ստեղծումը ձեռք բերման դրդապատճառների զարգացման համար արդյունավետ է այն ժամանակ, երբ իրավիճակը հանդիսանում է մասնագիտորեն իմաստալից: Օրինակ՝ մինչև բիզնես պլանի կառուցումը, ապրանքների գնի որոշումը, ուսանողների մոտ ի հայտ են գալիս պրոբլեմային իրավիճակներ, երբ դասախոսության ժամանակ ձեռք բերված գիտելիքները գնագոյացման համար բավարար չեն, որպեսզի ճիշտ սահմանվեն գները:

Այս իրավիճակից դուրս գալու ելքը չափազանց կարևոր է ձեռնարկատիրոջ համար, քանի որ նշված գնից է կախված ձեռնարկատիրոջ գլխավոր նպատակը՝ շահույթի ստացումը: Ստեղծված պրոբլեմային իրավիճակում ուսանողները ստիպված են լինում փնտրել լրացուցիչ տեղեկատվություն՝ օգտագործելով գրականության աղբյուրներ, վերլուծելով իրավիճակը ապրանքա-

մրցակցային շուկայում: Այս տեղեկատվությունն ամբողջությամբ հասանելի է ուսանողներին, դրա համար պրոբլեմային ինֆորմացիան հաջող կերպով լուսաբանվում է բավականին արագ, ինչը բարձրացնում է շարժառիթների ձեռք բերման հնարավորությունը: Վերջինիս զարգացման առումով մեծ նշանակություն ունի ուսանողների համար ինքնավստահության և ինքնուրույնության իրավիճակի ստեղծումը: Այդ ամենն ուղղորդվում է դասավանդողի կողմից: ուսանողների արդարացի գնահատմամբ, նրանց արտահայտած ճիշտ և հստակ մտքերի բարձր գնահատանքի արժանացմամբ, դժվար իրավիճակներում ճիշտ խորհրդատվություն տրամադրելու անհրաժեշտությամբ:

«Ձեռնարկատիրական գործունեության հիմունքներ» ծրագրի ուսուցման ժամանակ հաճախ օգտագործվում են հատկապես այնպիսի պատմվածքներ, որոնց հիմքում ընկած է պրակտիկ ձեռնարկատերերի իրական հաջողությունների մասին տեղեկատվությունը:

Հաջողակ ձեռնարկատերերի և մենեջերների հետ կազմակերպվող հանդիպումները նույնպես զարգացնում են ուսանողների մոտ շարժառիթների ձեռք բերման հնարավորությունը: Աղյուսակ 1-ում բերված են «Ձեռնարկատիրական գործունեության հիմունքներ» ծրագրում օգտագործված ուսուցման մեթոդներն ու եղանակները:

«Ձեռնարկատիրական գործունեության հիմունքներ» ծրագրում օգտագործվող հիմնական դիդակտիկ միջոցները

Աղյուսակ 1

Հ/Հ	Ծրագրի առաջադրանքները	Ծրագրի դիդակտիկ միջոցները
1	Ուսանողների մոտ հիմնարար գիտելիքների համակարգի ձևավորումը	Դասախոսություն + յուրահատուկ առաջադրանքների համակարգ, բանավեճեր, քննարկումներ, կոնկրետ բիզնես իրավիճակների վերլուծություն
2	Մասնագիտական մանկավարժական դրդապատճառների զարգացում	Դպրոցի պայմաններում օգտագործվող դիդակտիկ միջոցների հատուկ առաջադրանքներ
3	Ուսանողների պատրաստումը պրակտիկ մասնագիտական գործունեության	Բիզնես պլանավորում, ձեռնարկատիրական փաստաթղթերի վերլուծություն, կառավարչական իրավիճակների որոշում, սնանկ վիճակից դուրս գալու եղանակների մշակում, ապրանքների և ծառայությունների շուկայում իրականացրած վիճակի վերլուծություն, մարքեթինգային հետազոտության անցկացում, գործարար խաղեր
4	Ձեռնարկատիրական հատկանիշների զարգացումը	Պրոբլեմային դասախոսություն, աշխատանք փոքր խմբերով, խնդրի ստեղծագործական լուծման մեթոդներ, գործարար խաղ, դասախոսության մեթոդ, մարքեթինգային հետազոտություն

Օգտագործված գրականության ցանկ

1. Андреев В. И., Саморазвитие менеджера. М., Народное образование, 1995
2. Давыдов В. В., Психологическое развитие и воспитание //Хрестоматия по педагогической психологии / Сост. А. И. Красило, А. П. Новгородцев. М., Междунар. пед. акад., 1995
3. Копалов В. И., Копалова А. Г., Социальная детерминация развития способностей личности //Формирование творческих способностей: сущность, условия, эффективность: Сб. научн. Трудов /Отв. ред. С. З. Гончаров. Свердловск, Свердловский инженерно-педагогический институт, 1990
4. Лозовский А. Ш., Райзберг Б. А., Словарь-справочник предпринимателя. М., "Ось-89", 1997
5. Теплов Б. М., Избранные труды: В 2 т. /Ред.-сост., авт. вступ. ст. и коммент. Н. С. Лейтс, И. В. Равич-Щербо. М., "Педагогика", 1985
6. Чигиринская Н. В., Становление у старшеклассника предприимчивости как качества личности: Дис. ...канд. пед. наук. Волгоград, 1995
7. Шадриков В. Д., Проблемы профессиональных способностей //Психологический журнал. 1982, N5